1983 թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԱՐԳԻՇԹԵԽԻՆԵԼԵՈՒՄ ԵՎ ՆՈՐԱՀԱՅՏ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռ. Մ. ԹՈՐՈՍՅԱՆ, Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

Արարատյան դաշտում Վանի թագավորության վարչատնտեսական, մշակութային ու հոգևոր կյանքի կարևոր կենտրոն Արգիշթեխինելե քաղաքի պեղումները սարեցտարի նոր և բարձրաժեք նյութեր են տալիս Հայկական լեռնաշխարհում հին արևելյան ստրկատիրական պետություններից մեկի՝ Բիաբինելե-Ուրարտուի պատմության, մշակույթի ու քաղաքաշինության վերաբերյալ։

'Aza երկրում, Արգիշթե I-ի կողմից (մ. թ. ա. 776 թ.) հիմնարկված և նրան հաջորդած թագավորների կողմից համակառուցված հնամենի Արգիշթեխինելեն գտնվում է Հոկտեմբերյանի շրջանի Աղամավիո և Ն. Ամասիա գյուղերի միջև ձգվող բլրաշարքի վրա և նրա շրջակայքում։ Շնորհիվ Արգիշթեխինելե-Արմավիր քաղաքները ուսումնասիրող արշավախմբերի բազմամյա աշխատանքների, այժմ պարզված է, որ Արգիշթեխինելեն բաղկացած է երկու ամրոցներից, քաղաքաբնակների ընդարձակածավալ առանձնատներով կառուցապատված քաղաքային թաղամասերից, այգեստաններից ու դամբարանադաշտերից։

Արգիշթեխինելեի արևմտյան ամրոցը գտնվում է Նոր Արմավիր գյուղի հարավային կողմում վեր բարձրացող Դավթի բլրի գագաթին։ Այն զբաղեցնում է շուրջ երկու հեկտար մակերես[1]։ Քառանկյունի աշտարակներով, եռաշարք հաստաբետ պարիսպներով պաշտպանված արևմտյան միջնաբերդը ներքին քաղաքի ու արտաքին աշխարհի հետ հաղորդակցվել է քարակոփ երկու դարպասներով։ Նրանցից մեկը՝ արևելյանը, պալատական շենքի շքամուտքն է, իսկ մյուսը՝ հյուսիսայինը, բազալտաշեն կրկնակի մուտքերով «ավագ» դուռը։ Վերջինիս կարելի է մոտենալ բլրի ստորոտից սկիզբ առնող և լանջն ի վեր ձգվող երբեմնի ճանապարհով, որը «ավագ» դարպասից ներս միաձուլվում է մուտքի դիմաց սփռվող ընդարձակ, քառանկյունաձև հրապարակի հետ։ Ռազմապաշտպանական, հոգևոր ու աշխարհիկ նպատակների ծառայած միջնաբերդի այս հրապարակը (№ 1 բակ) արևելքից, հյուսիսից և հարավից շրջափակված է մոնումենտալ շինությունների հաստահեղույս պատերով, իսկ արևմտյան կողմից նեղ մուտք ունեցող միջանցքով միացած է հոգևոր և աշխարհիկ բնույթի շենքերով կառուցապատված «տաճարական» անվանված № 2 բակի հետ։

Արգիշթեխինելե քաղաքի արևմտյան հատվածը ուսումնասիրող արշավախումբը 1983 թ. ավարտեց արևմտյան միջնաբերդի № 1 բակի մաքրման աշխատանքները։ Պեղումների միջոցով պարզվեց, որ միջնաբերդի այլ հատվածների նման, մշակութային շերտը № 1 բակի տարածքում ևս ուներ 1,5—1,8 մետր թանձրություն։ Հուշարձանի շերտագրական սանդղակի ստորին մշակութային հորիզոնը բաղկացած է Վանի թագավորության ժամանակաշրջանի շինարարական երկու շերտերից (0—1 մ հաստություն), իսկ վերինը՝ դարգացած միջնադարյան բնակավայրի կացարանների տնտեսական շինարարություններիր ու կենցաղային հորերի փլատակների մնացորդներից (1—1,8 մ հաստություն)։

Երկու մշակութային դարաշրջանների մեջ հասած շինությունների շերտագրական փոխառնչությունների հնագիտական պատկերը ներկայացնելու տեսակետից անհրաժեշտ է նկատել, որ Վանի թագավորության ժամանակաշրջա-

---

[1] Արգիշթեխինելե քաղաքի ուսումնասիրությունների մինչև 1970 թ. արդյունքները մանրամասն տե՛ս А. А. Мартиросян. Аргиштихинили. Вып. I, Ереван, 1974.

նի բաղալտաշեն հիմքերով, հում աղյուսե պատերով կառույցների փլատակների վրա դրված միջնադարյան տնակների հիմքերը, թոնիրները և կենցաղային հորերը խստագույնս վնասել են ստորին մշակութային շերտի կառույցներին։ Չնայած այս վիճակին, այնուամենայնիվ, Վանի թագավորության ժամանակաշրջանի շինությունների մեջ հասած հատվածներն ու փոքրածավալ պատոհիկները հնարավորություն են ընձեռում հետևելու միջնաբերդի կենտրոնական բակի (№ 1) կառուցման հատակագծային-շինարարական առանձնահատկություններին ու վերակառուցումներին։

Կենտրոնական (№ 1) բակի միջավայրում Վանի թագավորության շինարարական վաղ շերտը (I) դրսևորվում է Արգիշթե I-ի կառուցած «ավագ» դարպասով, բակի արևելյան կողմում գտնվող պալատական շենքով, հյուսիսային և հարավային կողմերում առկա մեծածավալ պահեստներով ու մանր գույնզգույն գետաքարերով երեսապատված, շուրջ 750 մ² մակերես ունեցող հրապարակով։

№ 1 բակի քարածածկ, գեղատեսիլ հատակը կառուցվել է նախապես հարդարված տարածքի վրա։ Իրենց շինարարական ավանդույթներին հարազատ ուրարտական վարպետներն ու շինարարները բլրի մակերևույթի այն վիճակը, որը չի համապատասխանել, խանգարել է կառույցի նախագծին, վերացրել են։ Ընդ որում, բնական մակերևույթի փոս եղած տարածությունները լցվել են որձաքարերով ու ծածկվել դիմացկուն կավաշաղախով։ Վերջինիս վրա լրացուցիչ կավայնխ է փռվել, որի մեջ էլ շարվել են բազմագույն գետաքարերը։ Ակսլիսի հորինվածք ունեցող հատակի վերին մակերևույթը հատակի հարդարված բնական մակերեսից բարձր է 10—20 սմ։ Բակի տարածքի այն հատվածներում, որտեղ ժայռի մակերեսը բարձր է եղել, կտրվել հեռացվել է, իսկ նրա լրացուցիչ հարդարված մակերեսը օգտագործվել է որպես բնական քարակերտ հատակ։ Վերջինս ակնհայտ կերպով դրսևորվել է բակի հյուսիսային կողմում ամբարիոկից արևելյան (№ 1) սենյակի մուտքի մեջ և պալատական շենքի արևմտյան մուտքի դիմաց։ Բակի մանրաքարերով երեսապատված հատակը չոր պահելու (ձնհալի, անձրևի և կենցաղային ջրերի հեռացման) նպատակով շինարարները օգտագործել են տեղանքի մակերևույթի բնական թեքությունը։ Այս երևույթն է դրսևորում «ավագ» դարպասից դեպի պալատական շենքի արևմտյան շքամուտքը փռված միակերտ հատակի շուրջ 30 սմ թեքությունը։ Նույն նպատակին են ծառայել նաև № 1 բակում և ամրոցի այլ հատվածներում հայտնաբերված ստորգետնյա ջրահավաք իջանցքները (люки) և ցամաքուրդները։

Հանդիսավոր անցումների, հասարակական վայրերի, հրապարակների, կիսածածկ բակերի, շենքերի շքամուտքերի հատակների բարեսես, գեղատեսիլ ձևավորումը հնուց ի վեր եղել է հին աշխարհի ու Հայկական լեռնաշխարհի ճարտարապետ-շինարարների հոգացողության կարևոր հարցերից մեկը։ Հնագույն քարաշեն, սալահատակված ճանապարհներ ու անցումներ են հայտնի դեռևս նեոլիթյան Կիրոկիտայում[2], Հին Բաբելոնում ու Միջագետքի այլ քաղաքներում, որտեղ շինաքարը սուղ էր, ծիսական ու աշխարհիկ շքերթների ճանապարհներն ու հրապարակները երեսապատվում էին թրծած աղյուսներով կամ բիտումով։ Փոքր Ասիայում և Իրանում այս նպատակին ծառայում էին սալաքարերը կամ գետաքարերը[4]։

Բուն Հայկական լեռնաշխարհում խճաքարով կամ սալահատակներով երեսապատված անցումներ են հայտնի դեռևս մ. թ. ա. III հազարամյակի հնավայրերում և ուշ բրոնզի ու վաղ երկաթի դարերի ամրոցներում։ Բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջանների Հայաստանի քաղաքաշինական հասույթները հին ա-

---

2 Дж. Мелларт. Древнейшие цивилизации Ближнего Востока. М., 1982, с. 56, рис. 17.

3 Էլվին Քլենգել-Բրանդ. Ճանապարհորդություն դեպի հին Բաբելոն. Երևան, 1981, էջ 87։ В. Замаровский. Тайны хеттов. М., 1968, с. 237—265.

4 R. H. Dyson. Early cultures of Solduz, Azerbaijan. A survey of Persian art. Vol. XIV, 1967 pp 2951—2970, pl. 1028.

ռևելյան ավանդույթներին միախառնված ձևով առանձնակի արտահայտիչ են դառնում Վանի թագավորության հուշարձաններում։ Մասնավորեցնելով խոսքը հրապարակների ու անցումների հատակների կառուցման հնարանքների վրա, կարող ենք վերհիշել, որ մանր գետաքարերով ու սալաքարերով են երեսապատված Էրեբունեի, Թոփրաքկալեի[5], Կայալիդերեի[6], Ալթինթեփեի տաճարների շրջակայքն ու հրապարակները։

Արգիշթեխինելեի արևմտյան ամրոցում, բացի № 1 բակից, մանր խճաքարերով, սալահատակով, գետաքարերով են երեսապատված № 2 բակը, պալատական շենքի սյունազարդ կիսաբաց բակը, «ամբար» անվանված շինության մեջ գտնվող ուրարտական երկրորդ հատակը և այլն։

Արգիշթեխինելեի արևմտյան ամրոցի № 1 բակի տարածքում Վանի թագավորության ժամանակաշրջանի II շինարարական շերտը դրսևորվում է պալատական շենքին, հյուսիսային և հարավային ամբարներին կցված մոտավորապես համահավասար չափեր ունեցող սենյակներով, որոնց մուտքերը բացվում են բակի վրա։ Ելնելով այս սենյակների հատակագծային-շինարարական առանձնահատկություններից և նրանցում հայտնաբերված հնագիտական նյութերի շերտագրական պատկանելությունից, պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյանը իրավացի կերպով դրանք հատկացնում է Սարդուրե II-ին հաջորդած ժամանակաշրջանին։ Բակի մեջ կառուցված այս շինությունները ծառայել են որպես զորանոցներ և գոյատևել են մինչև քաղաքի անկումը ու հրդեհի ճառակ դարձել ողջ ամրոցի հետ միասին[7]։

Միանման քառանկյունի հատակագծով սենյակաշարերի կառուցմամբ փոքրացած հրապարակը քաղաքի գոյատևման ժամանակ չի կորցնում իր նախկին նշանակությունը և շարունակում է մնալ որպես միջնաբերդի տարբեր հատվածները իրար միացնող կարևոր օղակ։ Այդ է վկայում օգտագործվող հատվածի վերանորոգումը։ Նոր հատակը լավ պահպանված հատվածներում ունի 15—20 սմ հաստություն։ Այն կառուցված է ամուր կավաշաղախով և աղյուսներով։

№ 1 բակի տարածքում կատարված պեղումներով բացահայտվեց ուրարտական տնաշինության հետաքրքիր մի մանրամասն ևս։ Հյուսիսային ամբարին կցված սենյակաշարի արևելյան կողմից № 1 սենյակի հարավային և արևելյան պատերին, արտաքին կողմից կցված է տուֆ քարերով երիզված հարթակ։ Այն արևելահայաց պատի կողմում ունի 0,9 մ լայնություն, 2,9 մ երկարություն, իսկ հարավայինում՝ 8,2 մ երկարություն, 1,4—1,6 մ լայնություն։ Սենյակի մուտքի դիմաց հարթակը ընդհատված է 0,9 մ լայնությամբ անցումով։ Բակի հատակից 0,3—0,4 մ բարձրություն ունեցող հարթակի մակերևույթը կավածեփ է։ Ինչպես երևում է սենյակի, հրապարակի, հատակի և հարթակի միմյանց նկատմամբ ունեցած փոխհարաբերություններից, հարթակը ներկայացնում է բակի տարածքում ուրարտական ամենավերջին շինությունը և պատկանում է այն ժամանակաշրջանին, երբ Արգիշթեխինելեի արևմտյան ամրոցն ու քաղաքային թաղամասերի հոյաշեն առանձնատներից շատերը լքվել էին իրենց նախկին տերերի կողմից, երբ ամրոցի արևելյան մուտքը և պալատական շենքի մի հատվածը զբաղեցվել էր դարբնի արհեստանոցով ու բնակարանով, իսկ «տաճարական» հրապարակի կենտրոնում կառուցվել էր միահարկ, երկսենյականոց, ոչ մեծ շինությունը։ Հարթակի, № 1 սենյակի և բակի վերին՝ երկրորդ հատակից վեր ընկած շերտում դիտվող հրդեհի հետքերից ելնելով հարկ է նկատել, որ հարթակը, կառուցված լինելով սենյակից ուշ, գոյատևել է մինչև քաղաքի ավերումը։

Հարթակի նշանակությունը, նրա ունեցած երբեմնի տեսքի վերականգնումը դեռևս որոշակի չէ, սակայն ելնելով Թեյշեբաինների պեղումների տվյալների

---

[5] Б. Б. Пиотровский. История и культура Урарту. Ереван, 1944, с. 254.

[6] C. A. Burney. A first season of excavations at the Urartian citadel of Kayalidere.—Anatolian Studies, vol. XVI, 1966, p. 64, pl. 4.

[7] А. А. Маргиросян. Указ. соч., с. 90—93.

հիման վրա վերականգնված բնակարանի հետ ունեցած նմանությունից[8], կարող ենք ասել, որ այն եղել է պատշգամբի հարթակ, որը ծառայել է № 1 սենյակը ջրաղացնողին անտեսական նպատակների համար։

Բակի տարածքում, Վանի թագավորության ժամանակաշրջանի շերտերում հայտնաբերված հնագիտական նյութերը, ինչպես և սպասվում էր, սուղ են և խիստ-բեկորային։ Սրանք գործածությունից դուրս եկած և հատակների շաղախների մեջ լցված մուգ կարմիր, դեղնա-կավագույն շողուն անգորապատ և փայլեցված մակերեսներով կժերի, գավաթների, թասերի, սև փայլեցված մակերեսներով խոհանոցային կճուճների, տաշտակների, գարեջրի անոթների, քարե ամանների բեկորներ են։ Գավանոթներից մի քանիսի կանթերի ստորին ատպածի մակերեսին կամ շրջանաձև քիչ բարձր նստուկով հատակների վրա առկա են դանդաղ պտտակներով դաջվածքներ կամ խաղման եղանակով արված հիերոգլիֆ նշաններ։ Կան նաև ենթալաքը տատիպ կրող բեկորներ։ Հետաքրքիր է նկատել, որ երկու հատակների միջից հայտնաբերված խեցանոթները, իրենց որակով ու պատրաստման կատարելությամբ զգեթե չեն տարբերվում միմյանցից։ Վերին հատակի վրայից գտնվածները քիչ ավելի ցածր որակի են, ունեն խամրած, երբեմն նաև մրոտված մակերեսներ։ Վերջինը արդյունք է համեմատաբար վատորակ պատրաստման և հրդեհի ազդեցության։ Շինարարական երկու շերտերի խեցեղենի տեսակային իրարից չի տարբերվում։

Ինչպես նշեցինք վերը, հրապարակի վերին շինարարական շերտը պատկանում է գաղգացած միջնադարին։ Այն նեղկայանում է Վանի թագավորության շինություններից թափված աղյուսների շերտի մեջ իջեցված հորերով, թոնիրներով ու նրանց վերին մակերեսի մակարդակի վրա գտնվող բազալտաշեն պատերի շնչին պատառիկներով։ Բակի տարածքում միջնադարյան շինությունների փլատակները այնքան վատ էին պահպանված, որ անհնար էր որևէ շենքի կամ թեկուզ թոնրատան հատակագծի պատկերի վերարտադրումը։ Նշենք միայն, որ բակի մոտավորապես կենտրոնական մասում, ուրարտական շինություններից թափված աղյուսների շերտի վրա, հատակից 1,2 մ բարձրության վրա պահպանվել էր միջնադարյան ստորին շինարարական շերտին պատկանող 0,4 մ բարձրությամբ, 4,5 մ երկարությամբ հյուսիս-հարավ ձգվող բազալտաշեն, միաշար պատի մի հատված, որը հյուսիսային ծայրով ծածկում էր ուրարտական II շերտի շինության պատը։ Ինչպես ցույց տվեցին այս պատի շրջակայքի պեղումները, այն եղել է պատից անմիջապես արևմուտք գտնվող՝ իրար մոտ կառուցված մեծ ու փոքր թոնիրների հարթակի հենապատ։ Բակի տարածքում, միջնադարյան բազմաթիվ հորերի ու թոնիրների ուսումնասիրությունների ընթացքում առանձնակի հիշատակության է արժանի վերոհիշյալ պատից 2,5 մ արևելք, բակի երկայնական առանցքի վրա 1980 թ. պեղված թոնիրը։ Սրա վերին մասը բացակայում էր, ստորինը նստած էր ուրարտական հատակի վրա, ուներ շուրջ 0,9 մ բարձրություն, 60—80 սմ լայնություն։ Թոնրի կողերը երկտակ էին։ Արտաքին և ներքին կողերի արանքում և շրջակայքի լիցքի միջից ուրարտական միջնադարյան խեցանոթների բեկորների հետ մեկտեղ հայտնաբերվեցին նաև ուշ ուրարտական և վաղ հայկական դարաշրջանի խոշոր տափաշշի և փայլեցման եղանակով զարդարված մեկ կանթանի կժի բեկորներ։ Վերջիններիս հայտնաբերումը միջնադարյան վերանորոգված կրկնակի կողերով թոնիրի շրջակայքից զարմացնող է և հետաքրքիր։ Տեղանքի մանրաքննին ուսումնասիրությունները բացահայտեցին բակի տարածքում վաղ հայկական ժամանակաշրջանի շինության կամ գուգահեռ նյութի գոյությունը։ Ինչպես երևում է, թոնրի շրջակայքը և կողերի արանքը լցվել է մեկ այլ, ոչ շատ հեռու տեղից բերված հողով, որի հետ էլ նրա մեջ են գցվել վերոհիշյալ վաղ հայկական խեցանոթների բեկորները։ Նկատենք նաև այն, որ արևմտյան ամրոցի և բլրի լանջերի շուրջ 2 հեկտար պեղված տարածքում

---

8 И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 146, рис. 30.

սա երկրորդ վայրն է, ուր դիտվել են վաղ հայկական նյութեր։ Ենթադրվում է, որ արևմտյան ամրոցի անկումից հետո նրա տարածքի որոշ հատվածներ, գուցե և շատ չնչին մակերեսներով, զբաղեցվել են վաղ հայկական մշակույթը կրողների կողմից։ Վերջինիս համար հիմք է ծառայում Դավթի բլրի հարավ-հայաց լանջի արևմտյան հատվածում, ամրոցի I և II պարիսպների միջև գտնվող նկուղային սենյակներից մեկում հայտնաբերված, վերին մակերեսին ակոսաձև հանված ք ունեցող, վաղ հայկական և հելլենիստական վաղեմության աղորիքների քարերը և գնդաձև իրանով կարմիր կճուճն ու բազմաթիվ կոկիչները։ Բացի այս, հիշենք նաև, որ Արգիշթեխինելե քաղաքի արևմտյան ամրոցից հյուսիս և հյուսիս-արևմուտք, Նոր Արմավիր գյուղի կոլտնտեսության արտադրական մասում և Բամբակաշատ գյուղի հանդամասերում արդեն հայտնի են ուրարտա-հելլենիստական դարաշրջանների մշակութային նմուշներ պարունակող ոչ մեծածավալ հուշարձաններ։ Վերջիններիս հետագայում կատարվելիք ուսումնասիրությունները անկասկած օգնելու են Արգիշթեխինելե-Արմավիր քաղաքների պատմամշակութային ադերսները պարզաբանելու գործին։

Բակի տարածքում միջնադարյան բնակության արդյունք են նաև նրա արևմտյան կողմում, հյուսիսային պատի մոտ հայտնաբերված երեք խոշոր կարասները, որոնց մակերեսները զարդարված են Վանի թագավորության մշակույթին բնորոշ կիսաշրջանաձև և քառանկյունի ընդարձակ փոսիկներով։ Կարասները, ինչպես ցույց են տալիս նրանց միջից գտնված նյութերը և նրանց շրջակայքի պեղումները, այստեղ են բերվել միջնադարում և օգտագործվել են որպես պահեստ-հորեր։ Իրենց չափերով ու զարդարանքներով դրանք համադրվում են ամրոցի արևելյան մեծ շինության («պալատական շենք») հարավարևելյան կարասային սենյակում բացվածների հետ։

Զարգացած միջնադարյան ժամանակաշրջանի հորերի, թոնրատների փլատակների միջից հավաքված հնագիտական իրերի ժողովածուն բաղկացած է X—XIII դդ. թվագրվող հասարակ ու ջնարակած ամենատարատեսակ խեցանոթների, ապակյա տարագույն ապարանջանների, գոտեզարդ ու դաջազարդ կարասիկների բեկորներից, մետաղյա գործիքներից, գամերի շատ վատ պահպանված նմուշներից։ Առանձնակի հետաքրքիր են շողուն ջնարակապատ և կաղապարման եղանակով զարդարված, կիսաֆաբրիկատ վիճակում հայտնաբերված, բաց կանաչավուն խեցանոթի բեկորները, որը վկայում է տեղում նրանց պատրաստված լինելու մասին։

Միջնադարյան հորերի շարքում, իր պարունակած նյութով առանձնակի հիշատակության է արժանի քառանկյունի, քառաշեն պատերով № 7 հորը։ Այն գտնվում էր բակի հյուսիսային կողմի սենյակաշարի արևելյան № 2 սենյակի մուտքի մոտ։ Մեկ քառակուսի մետր մակերեսով և 1,2 մ խորությամբ պահպանված հորում դրված էր բազմականթ խոհանոցային մի կճուճ և երկարավուն իրանով ոչ մեծ կարաս՝ հարթ մակերես ունեցող գոտիով զարդարված։ Նույն հորի միջից ջնարակած թասի բեկորների հետ մեկտեղ գտնվեց մետաղյա մի իր, որը Հայաստանի հնագիտական հավաքածուների մեջ եզակի է։ Այն գնդաձև գլխիկով, հաստացող բռնակով, ձվածիր կտրվածք ունեցող ոտքով մի իր է, որի նստուկը կրկնակի սեգմենտաձև է, իսկ գլխիկի վրա կա օղակ։ Իրի ինչ լինելը դեռևս անորոշ է, սակայն այն շատ հարմար է կավամանները տարբեր տեսակի զարդապատկերներով զարդարելու համար։

Հորի հյուսիսային պատի վերին շարքի քարերից մեկը իր վրա կրում էր Արգիշթե I թագավորի սեպագիր արձանագրությունը։ Շինաքարը հորի պատի վրա էր դրված արձանագրված մակերեսով դեպի ցած։ Սա ծակոտկեն մակերեսով, 53 սմ երկարությամբ, 24 սմ լայնությամբ, անկանոն խորանարդաձև տեղական բազալտ է։ Նրա արձանագրված մակերեսը խնամքով հարդարված է, իսկ կողերը մշակված են «ռուստովկա» անվանված եղանակով։ Արձանագրությունը բաղկացած է 5 տողից։ Ջնայած արձանագրությունը in situ չէ, այնուամենայնիվ այն կարևոր նշանակություն ունի Արգիշթեխինելե քաղաքի արևմտյան ամրոցի բաղադրամասերի ուսումնասիրության, ինչպես նաև Վանի

թագավորության գրավոր ժառանգության հարստացման գործում։ Ստորև տալիս ենք արձանագրության տառադարձությունը և թարգմանությունը։

Արձանագրության տառադարձությունը.

1. ¹Ar-giš-ti-še
¹Mì-nu-a-hi-né-še
i-né É'a-ri šú-u-né
Ea-ši-ḫu-si-né pe-i
5. X LIM I ME ka-pe iš-ti-né[9]

Արձանագրության թարգմանությունը.

Արգիշթե Մինուաորդին այս շտեմարանը կառուցեց[10], «աշիխուսե» տան տակ, 10100 քապե այնտեղ [կտեղավորվի]։

Հայտնի են ուրարտական արքաների բազմաթիվ այլ արձանագրություններ՝ գրված 'ari-ների կառուցման կապակցությամբ[11]։ Այդ արձանագրությունները հիմնականում երեք բնույթի են. առաջին դեպքում՝ հակիրճ, չորս տող ունեցող արձանագրություններ են, որոնցում հիշատակվում է կառուցող արքայի անունը, պահեստի կառուցման փաստը և նրա տարողությունը[12], ինչպես, օրինակ, Արգիշթեխինելեից գտնված մեկ այլ արձանագրությունում է. «Ռուսա էրիմենայի որդին այս շտեմարանը կառուցեց, 1432 քապե այնտեղ [կտեղավորվի]»[13]։

Երկրորդ բնույթի արձանագրությունները սովորաբար ունենում են վեց տող և առաջինից տարբերվում են «խալդե աստծու մեծությամբ» կամ «խալդե աստծու զորությամբ» արտահայտության առկայությամբ[14], ինչպես, օրինակ, Արգիշթե I-ի Վանում գտնված արձանագրություններից մեկում է. «Խալդե աստծու զորությամբ, Արգիշթե Մինուաորդին այս շտեմարանը կառուցեց, 10000 քապե այնտեղ [կտեղավորվի]»[15]։ Երրորդ բնույթի արձանագրություններն ունենում են 11 տող։ Այստեղ չի հիշատակվում «խալդե աստծու զորությամբ» կամ «խալդե աստծու մեծությամբ» արտահայտությունը, սակայն վերջում լինում է շինարար արքայի տիտղոսաշարը[16], ինչպես, օրինակ, Արինբեր-

9 ¹Mi-nu-a-hi-ne-se բառում mi վանկը կարող է կարդացվել և me ձևով. տե՛ս И. М. Дьяконов. Урартские письма и документы (УПД). М.—Л., 1963, с. 100, 118, սեպախումբ № 218։ Սակայն նկատի ունենալով այն, որ ուրարտերենում սովորաբար i/e հնչյունով ավարտվող վանկագրին հաջորդող i կամ e ձայնավորը որոշում է այդ վանկի ճիշտ հնչումը (УПД, с. 29), նպատակահարմար ենք գտել այս անձնանունը տառադարձել վերոհիշյալ ձևով, քանի որ ուրարտերեն արձանագրություններում այս անձնանունը հաճախ գրվում է ¹Mi'é-i-nu-ú-a. տե՛ս օրինակ, Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи (УКН). М., 1960, № 24, երեսի կողմ, տող 21։ УКН, № 38, տող 3 և այլուր (հմմտ. УПД, с. 30), ինչպես և ¹Mi-nu-a-hi-né/i-e-še (տե՛ս օրինակ, УКН, № 127, II, տող 11, УКН, № 127, V, տող 37 և այլուր) ձևով։ i-né բառը կարելի է տառադարձել և i-ni ձևով, su-u-né բառը՝ sú-u-ni, a-si-ḫu-si-né բառը՝ a-si-ḫu-si-ni, pe-i բառը՝ pi-i, իսկ ka-pe բառը՝ ka-pi ձևով։

10 Šune բայն է, որի «կառուցեց» թարգմանությունը առաջարկել է Գ. Ա. Մելիքիշվիլին (տե՛ս Г. А. Меликишвили. Вопросы социально-экономической истории Урарту.— Вестник древней истории (ВДИ), 1951, № 4, с. 24, прим. 4)։ Այս բառի s(u)-բայարմատն Ի. Մ. Դյակոնովը թարգմանում է «լցնել» [«насыпать (?)»] ձևով (УПД, с. 91)։

11 Տե՛ս УКН, №№ 135, 139, 162—164, 288։ Մ. Ա. Իսրայելյան. Երևանի բերդքաղաքի պատմություն. Երևան, 1971, արձ. № 8—12, 20—24։

12 УКН, № 139, 288։ Մ. Ա. Իսրայելյան. նշվ. աշխ., արձ. № 8—12, 21—23։

13 УКН, № 288.

14 Տե՛ս УКН, № 135, 162, 163. Մ. Ա. Իսրայելյան. նշվ. աշխ., արձ. № 24։

15 УКН, № 135.

16 Նույն տեղում, № 164։ Մ. Ա. Իսրայելյան. նշվ. աշխ., № 20։

դի արձանագրություններից մեկում է. «Սարդուրե Արգիշթորդին այս շտեմարանը կառուցեց, 5100 քայլ այնտեղ [կտեղավորվի]։ Սարդուրե Արգիշթորդին արքա է հզոր, արքա մեծ, արքա Բիաինելեի, արքա երկրների, տերը Տուշպա քաղաքի»[17]։

Արգիշթեխինելեի նորահայտ արձանագրությունը տարբերվում է վերահիշյալներից։ Այն առավել նման է 4 տող ունեցող արձանագրություններին, սակայն ունի մի տող, որը բացակայում է նման բնույթի մյուս արձանագրություններում. խոսքը արձանագրության չորրորդ տողի մասին է, ուր խոսվում է այն մասին, թե որտեղ է կառուցվել E'ari-ն («աշիխուսեի» տակ) և այս առումով այն միակն է։

Այս արձանագրությունը հնարավորություն է տալիս հարստացնելու մեր գիտելիքները E'ari և Easiḫase շինությունների մասին ընդհանրապես՝ ինչպես և որոշել այդ շինքերի տեղադրությունը Արգիշթեխինելե քաղաքի արևմտյան ամրոցում։ Արձանագրության բովանդակությունից պարզ է, որ ներկա դեպքում E'ari-ն E'asiḫase տան մի մասը կազմող շինություն է եղել (նկարը)։ Հանգամանք, որը մի անգամ ևս ապացուցում է Դ. Ա. Մելիքիշվիլու այն տեսակետը, թե, E'ari բառը նշանակել է «շտեմարան»՝ ամենայն հավանականությամբ հացահատիկի համար նախատեսված[18]։ Հետևաբար և «աշիխուսե» տունն ունեցել է նաև ամբար. այս են վկայում ոչ միայն քննարկվող արձանագրության տվյալները, այլև Արինբերդից գտնված մի արձանագրության բովանդակությունը, ուր խոսվում է E'ari և Easiḫuse շինությունների կառուցման մասին[19]։

---

17 Նույն տեղում։ Ուշագրավ է, որ Արգիշթե I-ի և Սարդուրե II-ի կառուցած E'ari-ների մեծ մասը ունեցել են նույն տարողությունը՝ 10100 քայլ։

18 Г. А. Меликишвили. Вопросы социально-экономической истории Урарту, с. 25.

19 Н. В. Арутюнян, К. Л. Оганесян. Новые урартские надписи из Эребуни.—ВДИ, 1970, № 3, с. 110, № 6.

«Աշիխուսե» տան շինարարության մասին խոսվում է նաև Մինուա արքայի արձանագրություններից երեքում։ Բոլոր երեքն էլ փորագրված են խարսխաքարերի վրա (երկուսը գտնվել են Վանում, մեկը՝ Վարագա վանքի մոտ), միևնույն բովանդակությամբ. «Մինուա Իշպուինորդին այս Easiḫuse կառուցեց»[20]։ Քանի որ հայտնի են «աշիխուսե» տան կառուցման մասին արձանագրություններ՝ գրված նաև խարսխաքարերի վրա, ուրեմն և պիտի ենթադրել, որ այս տունն ունեցել է «յուն»[21]։



Մ. Ա. Իսրայելյանը Easiḫuse հասկացության համար առաջարկում է «տան վահանների» թարգմանությունը[22]։ Հետաքրքիր դիտողություն է (մասնավորապես «վահանի տան» էր անվանվում Մուծածիրի Խալդիի տաճարը)[23], որը, սակայն, վիճելի է, քանի որ ašiḫuse բառի հիմքը թերևս ašihə/i[24] կամ ašḫ ձևը պիտի ունենա, հետևաբար և քիչ հավանական է, որ այն կազմված լինի ուրարտերեն aše «վահան» բառով։

Այս առումով թերևս ավելի հավանական է Ֆ. Վ. Քյոնիգի տեսակետը, որը ašihuse բառը առաջարկում է ստուգաբանել ուրարտական արձանագրություններում վկայված ašḫ «զոհաբերել»[25], «զոհել»[26] բայով, Easihuse հասկացությունը բացատրելով, «պաշտամունքային զեղումների վայր» կամ «աստվածությունների տաճար» ձևով[27]։

20 УКН, №№ 83, 84, 85.

21 Եթե ենթադրենք, որ ašihuse բառը ծագում է շինության ոչ թե ֆունկցիոնալ նշանակությունից, այլ բնութագրում է նրա ունեցած ճարտարապետական ձևը, ապա կարելի է ենթադրել, որ Easihuse նշանակել է «յունավոր տուն» և կազմված է asihe կամ ash հիմքից և use ածականակերտ մասնիկից (հմմտ. LUGAL «արքա» և LUGAL-huse «արքայական»), այսինքն asihe (ash) բառը նշանակել է «յուն»։ Զրաց առելով Easihuse հասկացության նման բացատրության հնարավորությունը՝ այնուամենայնիվ առավել հավանական է թվում asihuse բառի Ֆ. Վ. Քյոնիգի առաջարկած ստուգաբանությունը, որի մասին տե՛ս ստորև։

22 Մ. Ա. Իսրայելյան. նշվ. աշխ., էջ 177, ծան. 2։

23 Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1959, с. 224.

24 УКН, с. 391.

25 УПД, с. 87.

26 E. W. König. Handbuch der chaldischen Inschriften. I—II, Graz, 1955—1967 S. 175.

27 Նույն տեղում։ Easihuse հասկացությունը կարելի է թարգմանել թերևս «տուն զոհաբերության» ձևով։

Ուշագրավ է, որ Օշականի ուրարտական տաճարը նույնպես կառուցված է եղել սյունասրահի ձևով, ուր կատարվել են նաև զոհաբերություններ, զոհերը մնացորդները լցվել են սյունասրահի հատակին փորված հորերը[28]։

Հայտնի է, որ Ուրարտուի արքաները տաճարներին նվիրաբերում էին հագարավոր խոշոր ու մանր եղջերավոր անասուններ[29]։ Նկատի ունենալով այս, ինչպես և այն հանգամանքը, որ ուրարտացիք աստվածություններին զոհաբերում էին նաև գինի ու հաց, պիտի ենթադրել, որ զոհաբերությունների համար նախապես ամբարվում էին համապատասխան մթերքներ, որոնք պահելու համար անհրաժեշտ էին համապատասխան օժանդակ շինություններ։ Հետևաբար, տաճարին կից պիտի լինեին նման կառույցներ, որոնցից մեկի մասին (Ḫ.arı) էլ խոսվում է Արգիշթեխինելեի հրատարակվող արձանագրությունում։

Այսպիսով, պիտի ենթադրել, որ ḪašIhuse-ն մի շենք է, կազմված հիմնականում սյունասրահից և ամբարից։ Արգիշթեխինելեի արևմտյան ամրոցում, նորահայտ արձանագրության գտնված վայրին շատ մոտ, բակի հյուսիսային թևում, պեղված է սյունազարդ դահլիճից, մեծածավալ ցորենի պահեստից և նրանց կից քառանկյունի փոքր սենյակից բաղկացած մի շինություն, որի սյունազարդ ընդարձակ դահլիճի հատակը 3,5 մետրով բարձր է ամբարի հատակից։ Վերոհիշյալ սյունազարդ դահլիճի ուրարտական շերտում հայտնաբերվել են պաշտամունքային կիրառության շքեղ անոթների և ճրագների բեկորներ ու երկաթյա մեծ շքառամեր[30], որոնք ցույց են տալիս այս շինության պաշտամունքային նշանակությունը։ Բացառված չէ, որ արձանագրությունում խոսվում է հենց այս շենքի մասին։

Ըստ երևույթին, ուրարտական «աշիիուսե» տունը, իր ունեցած կիրառական նշանակությամբ համապատասխանել է խեթական «սինապսի» անվանված շինությանը, որը կրոնական նշանակության մի կառույց էր, ուր կատարվում էին զոհաբերություններ աստվածներին[31]։

РАСКОПКИ АРГИШТЕХИНЕЛЕ В 1983 г. И НОВАЯ УРАРТСКАЯ НАДПИСЬ

Р. М. ТОРОСЯН, С. Г. АМАЯКЯН

Резюме

В 1983 г. экспедиция Института археологии и этнографии, изучающая западную часть города Аргиштехинеле, завершила расчистку центрального двора западной цитадели. На этом участке нижний культурный слой стратиграфической шкалы памятника состоит из двух строительных горизонтов эпохи Ванского царства, а верхний содержит остатки развалин жилищ и хозяйственных построек средневекового поселения.

В центральном дворе ранний строительный горизонт эпохи Ванского царства представлен сооруженными Аргиште I главными воротами, дворцовым зданием в восточной части двора, вместительными складами на севере и юге цитадели и

---

28 С. А. Есаян. Раскопки 1979 г. в Ошакане. Гос. музей истории Армении. Музей истории основания Еревана «Эребуни». Научная сессия, тезисы докладов. Ереван, 1981, с. 15.

29 *Տե՛ս, օրինակ,* УКН, № *19։*

30 А. А. Мартиросян. Указ. соч., с. 86.

31 А. Аракелян. Термин (É)sinapši в хеттских клинописных текстах.—Историко-филологический журнал, 1975, № 3, с. 241.

небольшой, занимающей около 750 м² площадью, выложенной цветной галькой. Второй строительный горизонт представлен приблизительно одинаковыми по размерам комнатами, пристроенными к дворцовому зданию, северным и южным амбарам. Двери комнат открываются во двор. Эти постройки служили казармами и существовали вплоть до падения города.

Среди средневековых построек особого внимания заслуживает хозяйственная яма № 7, обнаруженная возле входа к комнату № 2. Последняя находится на востоке северного ряда анфилады. В засыпи ямы найдена керамика эпохи средневековья, а также железный инструмент гончара. Один из камней верхнего ряда кладки северной стены ямы на лицевой стороне имел клинообразную надпись Аргиште I. Надпись гласит: «Аргиште, сын Минуа, это зернохранилище устроил под домом *ашихусе,* 10100 *капе* там [поместится]». Из содержания надписи следует, что в данном случае часть постройки, именуемой *ашихусе,* была амбаром. Так как надписи, свидетельствующие о постройке здания *ашихусе,* найдены также на базах, можно предположить, что это здание имело колонный зал. По мнению Ф. В. Кёнига, дома под названием *ашихусе* были храмами или местами жертвоприношений. В Аргиштехинеле на северном участке центрального двора раскопано строение с колонным залом и амбаром. Пол колонного зала выше амбара на 3,5 м. В колонном зале обнаружены фрагменты роскошной керамики, возможно, являвшейся частью храмовой утвари. По всей вероятности, в надписи речь идет именно об этом сооружении.